

ՄԻԿՐՈՏՆԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ղոցենստ, տնտեսագիտության թեկնածու

ԶԵՆՖԻՐԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ղոցենստ, տնտեսագիտության թեկնածու

ԶԱՐՈՒՀԻ ՄԵԼՔՈՒՅՑԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ
ԵՎ ՇԱՀՈՒՅԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ

Հեղինակների նպատակն է ուսումնասիրել շահույթի և շահութաբերության ալա-
մավորնան առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ առաջադրվել են հետևյալ հիմնա-
կան խնդիրները. հետազոտել «շահույթ» և «շահութաբերություն» հասկացությունների
տնտեսագիտական բովանդակությունը, ուսումնասիրել դրանց կազմի և կառուցված-
քի յուրահատկությունները, իմշաբն նաև ձեռնարկության շահույթի ու շահութաբերու-
թյան գործոնային և պլանավորման մեթոդաբանությունը:

Ընդհանրացված կերպով շահույթի գաղափարն ուսումնասիրելիս առաջ եկած
բոլոր բացատրությունները, ըստ հեղինակների, կարելի է ներկայացնել համապա-
տասխան խմբերով:

Հիմնաբառեր. ձեռնարկատիրական գործունեություն, նվազագույն ժախսեր,
շահույթ, շահութաբերություն, առավելագույն օգուտ, արտադ-
րության արդյունավետություն, սեփական կապիտալ

JEL: D24, D39, L23, L26, M29

Ծուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկության գործունեության պլանավորման և հետազայում արտադրական կամ այլ գործունեության, իմանական ֆոնդերի օգտագործման արդյունավետության, ինչպես նաև վերարտադրության յուրաքանչյուր փուլի արդյունքների գնահատման համար կարևորվում են մի շարք տնտեսական ցուցանիշներ, որոնց համակարգում առաջնահերթ տեղ են զբաղեցնում շահույթը և շահութաբերությունը¹: Շահույթը ձեռնարկության ձեռնարկասիրական գործունեության վերջնական ֆինանսական արդյունքն է, որը տնտեսավարող սուբյեկտներին կողմնորոշում է նվազագույն ծախսումներով առավելագույն օգուտ ձեռք բերելու գործողությունների, ռեսուրսների խնայողաբար օգտագործման, արտադրական կարողությունների անխափան աշխատանքների ապահովման, աշխատուժի որակի բարձրացման և այլն: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի համար շահույթի ստացումը դաշնում է նպատակ, որը և խթանում է տնտեսական գործունեությունը՝ փորձելով ապահովել շրջանառությունից ավելի մեծ կապիտալի ստացում, քան ներդրվել էր²:

Որպես տնտեսագիտական հասկացություն՝ շահույթն արտացոլում է ձեռնարկասիրական գործունեության արդյունքում ստեղծված զուտ եկամտի մեծությունը, որն առաջանում է նյութական արտադրության ոլորտում, իսկ ապրանքադրամային հարաբերությունների պայմաններում ձեռնարկության մակարդակով զուտ եկամուտը ստանում է շահույթի տեսք³: Դա ձեռնարկության տնտեսական և սոցիալական զարգացման իմանական գործոնն է, արտադրության արդյունավետության մակարդակի բարձրացման կարևորագույն խթանը, իսկ վնասները՝ տնտեսությունը ոչ ճիշտ վարելու, արտադրության կազմակերպման ոչ արդյունավետ մեթոդների առկայության ապացուցք: Մյուս կողմից էլ ձեռնարկությունների՝ շահույթը առավելագույնի հասցնելու ծգոտումը ստիպում է գտնել հասարակության սահմանափակ ռեսուրսների առավել խնայողաբար օգտագործելու միջոցներ՝ հիմք դաշնալով տնտեսության զարգացման և մարդկանց բարեկեցության մակարդակի բարձրացման համար:

Գործնականում, առանձին արտադրատեսակի պարագայում, շահույթն արտադրանքի գնի և ինքնարժեքի, իսկ ամբողջ ձեռնարկության դեպքում արտադրանքի իրացումից ստացված հասույթի և իրացված արտադրանքի ինքնարժեքի տարբերությունն է⁴: Առևտրային կազմակերպությունների համար շահույթը.

- ֆինանսական ռեսուրսների աղբյուր է,
- ձեռնարկության ֆոնդերի (կուտակման, սպառման, զարգացման և այլն) ձևագործման աղբյուր է, ինչպես նաև ֆոնդաձևագործման ցուցանիշը, քանի որ հենց որա մեծությունից է կախված ձեռնարկության ֆոնդերի մեծությունը,
- աշխատանքային կոլեկտիվի գործունեության խթանման դրամական աղբյուր է,
- ձեռնարկության աշխատողների համար աշխատանքային և սոցիալական արտոնությունների (հավելումների) աղբյուր է,

¹Տե՛ս Գրիշենկո Օ.Վ., Աналіз и диагностика финансово-хозяйственной деятельности предприятия, 2000, էջ 35:

²Տե՛ս Կրավченко Լ.И., Анализ хозяйственной деятельности в торговле, М., 2003, էջ 313:

³Տե՛ս Վոլков Օ.И., Экономика предприятия, М., 2007, էջ 195:

⁴Տե՛ս Սկլյարենко В.К., Прудников В.М., Экономика предприятия, М., 2005, էջ 400:

- համադրում է ձեռնարկության գործունեության բոլոր կողմերը⁵:

Շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր ձեռնարկության շահութաբեր աշխատանքն ազատ մրցակցության և ազատ ձեռնարկատիրական գործունեության ծավալման պարագայում դիտվում է որպես օբյեկտիվ անհրաժեշտություն՝ համարվելով շուկայական հարաբերությունների կարգավորման և զարգացման առանցքը: Որպես ձեռնարկատիրական գործունեության վերջնական ֆինանսական արդյունք՝ շահույթը բավարարում է հենց ձեռնարկատերերի, նրանց աշխատողների և կառավարչական ապարատի պահանջմանը: Այսուղից էլ առաջ է քաշվում շահույթի՝ որպես ձեռնարկատիրական գործունեության վարձատրության մեկնաբանումը: Հետաքրքրական է նաև շահույթի՝ որպես չափահովագրված ռիսկի փոխհատուցման դիտարկումը: Որոշ հեղինակներ էլ շահույթը մեկնաբանում են իրեն մենաշնորհային եկամուտ: Ընդհանրացված կերպով շահույթի գաղափարն ուսումնասիրելիս առաջ եկած բոլոր բացատրությունները կարելի է խմբավորել հետևյալ կետերում:⁶

1. Շահույթը որպես քողարկված հատույց: Գործարարության շահույթի զգալի մասն այն հատույցն է, որ ձեռնարկատերերն ստանում են իրենց սեփական աշխատանքի կամ ներդրված դրամական միջոցների (այսինքն՝ հենց իրենց առաջարկած արտադրության գործուների) դիմաց: Շահույթի մի մասը բնական ռեսուրսների սեփականությունից ստացվող վարձավճարային հատույցն է: Խոչոր ընկերակցությունների շահույթի մեջ մասը ներդրված արտադրամիջոցների այլընտրանքի գինն է: Նման հատույցը կոչվում է քողարկված, որը ձեռնարկության սեփական գործուների այլընտրանքի գինի անվանումն է: Այսպիսով՝ շահույթի մի մասն իրականում հենց նույն վարձավճարներն ու աշխատավարձերն են՝ այլ անվանումով: Զերնարկության սեփականություն համարվող գործուների դիմաց ստացվող եկամուտները տնտեսագետներն անվանում են քողարկված վարձավճար և քողարկված աշխատավարձ:

2. Շահույթը որպես պարզավճար ռիսկի և նորաստեղծության համար: Չիկագոյի համալսարանի տնտեսագետ Ֆրանկ Նյայտն առաջ քաշեց այն զաղակարը, որ շահույթը կապված է անորոշության կամ թերիրագեկության հետ: Ըստ նրա՝ քողարկված հատույցը հանելուց հետո մնում է գուտ շահույթը, որն անորոշ հատույցով ներդրում կատարելու համար տրվող պարզավճարն է:


3. Շահույթը որպես «մենաշնորհի հատույց»: Եթե շուկան զգալիորեն շեղվում է կատարյալ մրցակցային լինելուց, ձեռնարկությունները, գները բարձրացնելով, կարող են մեծ շահույթներ ստանալ: Յուրաքանչյուր հաջող նորաստեղծություն ժամանակավոր մենաշնորհի է ծնում, որը կարձատու ժամանակաշրջանում ապահովում է «նորաստեղծության շահույթ»: Նման եկամուտները ժամանակավոր բնույթ են կրում, քանի որ մրցակցության պայմաններում մենաշնորհի աղբյուրը շուտով վերանում է: Նորաստեղծության շահույթը գոյություն կունենա այնքան ժամանակ, քանի դեռ շարունակվում են տեխնոլոգիական փոփոխությունները⁷: Դա նշանակում է՝ շահույթի մի մասը շուկայական իշխանության կամ մենաշնորհի հատույց է:

⁵Տե՛ս www.aup.ru

⁶Տե՛ս **Шաֆրոնов А.**, Новый подход к эффективности производства, “Экономист”, 2003, №4, էջ 82-87:

⁷Տե՛ս **Кондратьева М. Н., Баландина Е. В.**, Экономика предприятия. Ульяновск, 2011, էջ 118:

Լինելով շուկայական հարաբերությունների գլխավոր հասկացություններից մեկը՝ շահույթն իրականացնում է մի շարք կարևորագույն գործառույթներ, որոնք ներկայացված են գծապատկերում:



Գծապատկեր 1. Շահույթի գործառույթների բնութագիրը

Ցուրաքանչյուր ծերնարկության համար, գործունեության ճիշտ կազմակերպման տեսանկյունից, խիստ կարևոր է տարբերակել շահույթի տեսակները, ճիշտ ընտրել շահույթի գոյացման տնտեսական մեխանիզմը, ձևավորման աղբյուրները և կազմակերպել շահույթի բաշխումը՝ ճիշտ ուղղություններով:

Շուկայական տնտեսության պայմաններում գործող ընկերությունների համար շահույթի ձևավորման հիմնական աղբյուրներն են բոլոր ծերնարկություններին բնորոշ արտադրական, առևտուրական և ֆինանսական գործունեությունը, այդ թվում՝ արտադրանքի կամ ծառայությունների իրացում, աշխատանքի ավելորդ միջոցների վաճառք և ոչ արտադրական բնույթի աշխատանքների ու ծառայությունների իրականացում, և նորարարական գործունեությունը, որն ապահովում է մենաշնորհային շահույթ⁸:


Բարոր իր տեսության մեջ ևս խոսել է շահույթի ձևավորման աղբյուրների մասին՝ առաջարկելով հետևյալ դասակարգումը:⁹

1. տնտեսական կառուցվածքից ստացված մենաշնորհային գերշահույթ՝ որպես սահմանային գնի ռազմավարության արդյունք,
2. շահույթ, որ առաջանում է պետության գործունեության արդյունքում, օրինակ՝ արտոնյալ հարկեր,
3. դիմերենցիալ շահույթ, որն առկա է մեծ ծերնարկություններում և կախված է բազմաթիվ մանր ծերնարկությունների գոյությունից,
4. շահույթ, որ կախված է արտադրության պարբերաշրջանից, այսինքն՝ գների, պահանջարկի, դրա առաջնային գործունեության ընդհանուր մակարդակի փոփոխությունից:

Շահույթի ձևավորման մեխանիզմը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

⁸ Տե՛ս Շ. Եվինյան, Չեռնարկության էկոնոմիկա, Եր., 2007:

⁹ Տե՛ս Բազիլեա հ.ի., Экономическая теория, Минск, 2004, էջ 241:



Գծապատկեր 2. Ձեռնարկության շահույթի ծևավորման մեխանիզմ¹⁰

Համախառն շահույթն արժադրանքի (աշխատանքի, ծառայությունների) վաճառքից ստացված հասույթի և իրացվող արժադրանքի լրիվ ինքնարժեքի տարբերությունն է, ցույց է տալիս առկա եկամտի տոկոսը, որը ծածկում է գործառնական և այլ ծախսեր¹¹: Համախառն շահույթի բարձր նարժան արժադրանքի բարձր գնանշման և ցածր ինքնարժեքի որոշակի համակցությունն է:

Վաճառքից ստացված շահույթը համախառն շահույթի և առևտրական ու կառավարչական (ընդհանուր տնտեսական) ծախսերի տարբերությունն է: Եթե կառավարչական ծախսերը ծեռնարկությունը ճանաչում է որպես սովորական գործունեության ծախսեր, ապա վաճառքից ստացված շահույթը որոշվում է որպես վաճառքից ստացված հասույթի և իրացվող արժադրանքի լրիվ ինքնարժեքի տարբերություն:

Մինչև հարկումը ստացվող շահույթը որոշվում է որպես վաճառքից ստացված շահույթի և գործառնական ու արտադրացումային եկամուտների մնացորդի գումար, հետևաբար՝ արտացոլում է վարկային միջոցների և այլ ոչ գործառնական եկամտի ու ծախսերի եկամտաբերության ազդեցությունը¹²:

¹⁰ Տե՛ս Խօսինա Տ.С., Ֆինանсовый анализ, Учебное пособие, М., Московская финансово-промышленная академия, էջ 82:

¹¹ Տե՛ս Կրիլով Զ.И., Վլասովա Վ.Մ., Ժуրավկова Ի.Վ., Աналіз фінансових результатов, рентабельности и себестоимости продукции, М., "Фінанси и статистика", 2006, էջ 717:

¹² Տե՛ս Грищенко О.В., նշվ. աշխ., էջ 71:

Սովորական գործունեությունից ստացված շահույթը որոշելու համար մինչև հարկումը ստացված շահույթից հանում են շահութահարկն ու վճարման ենթակա այլ հարկեր:

Զեռնարկության կողմից տնօրինվող գուտ շահույթը ներկայացնում է արտակարգ եկամուտներն ու ծախսերի մնացորդը: Դա հաշվարկում են որպես իրացման հասույթի և բոլոր ծախսերի տարբերություն: Չուտ եկամուտը ներառում է և՛ կրկնվող քաղադրիչներ: Չուտ շահույթի մարժան, որը կարգավորված է չկրկնվող ծախսերի համար, իիմնականում ավելի լավ պատկեր է ներկայացնում ընկերության հավանական շահութաբերության վերաբերյալ: Չուտ շահույթն օգտագործվում է ընկերության շրջանառու միջոցների ավելացման, ֆոնդերի և պահուստների, արտադրությունում վերաներդումների համար: Ընդհանուր առմանք, գուտ շահույթը կարող ենք հաշվարկել հետևյալ բանաձևով:¹³

$$\text{ՏԸ} = \sum_{i=1}^m (Q_i - P_{\text{Արժ}}) x R_i - (\sum_{i=1}^m (R_i x Q_i) x \text{ԾՀ} + \sum_{i=1}^m (Q_i - Q_i) x R_i x \text{ԱՄԱՀ}) \quad (1)$$

որտեղ՝ Q_i -ն միավոր i-րդ արտադրանքի մեջածախ գինն է,
 $P_{\text{Արժ}}$ -ն՝ միավոր i-րդ արտադրանքի լրիվ ինքնարժեքը,
 R_i -ն՝ i-րդ արտադրանքի տարեկան ծավալը,
 ԾՀ -ն՝ միավոր i-րդ արտադրանքի համախառն շահույթը,
 ԾՀ -ն՝ շահութահարկը,
 m -ը՝ անվանացանկում ներառված արտադրատեսակների քանակությունը՝ համարները,
 Q_i -ն՝ միավոր i-րդ արտադրանքի արտադրության վրա կատարված ծախսերը՝ արժեքային արտահայտությամբ:

Կախված շահույթի մեծությունից՝ տարբերում են դրա նվազագույն, նորմալ և առավելագույն տեսակները: Նվազագույն է համարվում այն շահույթը, որը հարկերի վճարումից հետո ծերնարկությանն ապահովում է ներդրված կապիտալի շահութաբերության նվազագույն մակարդակ՝ տվյալ ժամանակաշրջանում բանկում ներդրված ավանդների տոկոսադրույթին հավասար¹⁴: Նվազագույն շահույթի գումարը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԾՎԳ} = (\text{ԿՀ} \times \text{ԿԸԲ}_{\text{ԱԳ}} + \zeta) / 100\% \quad (2)$$

որտեղ՝ ζ -ն ներդրված կապիտալն է,
 $\text{ԿԸԲ}_{\text{ԱԳ}}$ -ն՝ կապիտալի շահութաբերության նվազագույն մակարդակը՝ արտահայտված տոկոսներով,
 ζ -ն՝ հաշվեկշռային (հաշվապահական) շահույթում հարկերի և հատկացնումների տեսակարար կշիռը:

Նորմալ շահույթ ասելով՝ հասկացվում է ծերնարկատիրոջ նվազագույն պարզեատրությունը, որի պարագայում նա կշարունակի իր գործունեությունը տվյալ լորուսում: Եթե ստացվող շահույթը փոքր է նորմալ շահույթից, ապա կապիտալը և ծերնարկատերը «կտեղափոխվեն» այլ ոլորտ: «Կապիտալի փախուստը» նվազ շահութաբեր ճյուղերից հետագայում կնպաստի կապի-

¹³ Տե՛ս Գյունի Օ.Վ., Գյունի Վ.Ե., Աналіз фінансово-хозяйственnoї дeятельности, М., "Практикум", 2012, էջ 103:


¹⁴ Տե՛ս Պопова Վ.М., Լյաпунова С.И., Бизнес-планирование. М., "Финансы и статистика", 2001, էջ 318:

տալի շահութաբերության աճին: Իսկ եթե ծերնարկությունները տվյալ ձյուղում ստանում են նորմալ շահույթից բարձր շահույթ, ապա այլ ձյուղերից կապիտալը կուղղվի տվյալ ձյուղ, որի հետևանքով շահույթի մակարդակը կնվազի մինչև նորմալ շահույթի մակարդակ: Նորմալ շահույթի գումարը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով:¹⁵

$$C_{\text{պ}} = (\text{Կ} \times \text{ԿԸԲ}_{\text{նպ}}) / 100\% \quad (3)$$

Առավելագույն շահույթը պայմանավորված է շուկայում ծերնարկության վարքագոնով: Այն ծերնարկությունը, որը նպատակ ունի առավելագույնի հասցնելու իր շահույթը, պետք է որոշի արտադրության այն ծավալը, որը թույլ կտա ստանալ առավելագույն հնարավոր շահույթը: Շահույթի ստացումն էականորեն կախված է ֆինանսական հոսքերի շարժի ճշգրիտ որոշումից, եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածությունից, արտադրության և արտադրանքի իրացման պլանների՝ ֆինանսական հոսքերի շարժին համապատասխանությունից:

Կարևոր նշանակություն ունի ոչ միայն շահույթի ստացումը և դրա ապահովմանն ուղղված գործունեության արդյունավետությունը, այլև արդյունավետ բաշխումն ու օգտագործումը: Դրանք դիտվում են որպես կարևոր տնտեսական գործընթացներ, որոնցով ապահովվում են ծերնարկատերերի կարիքների բավարարությը և հանրապետության բյուջեի որոշակի եկամուտների ձևակիրումը: <<ուն ծերնարկությունների շահույթի բաշխումը հիմնականում կանոնակարգվում է «Շահութահարկի մասին» <<օրենքի պահանջներին համապատասխան: Կազմակերպությունների շահույթի բաշխման ամբողջական մեխանիզմը ներկայացնենք գծապատկերի միջոցով.



Գծապատկեր 3. Զերնարկության շահույթի բաշխման մեխանիզմը¹⁶

Այսպիսով՝ ծերնարկության գործունեության կայունությունը կախված է բավարար շահույթ ապահովելու նրա ունակությունից, որը մեծ ազդեցություն

¹⁵Տե՛ս Լյուբուշին Հ.Պ., Լեշչева Վ.Բ., Դյակովա Վ.Ղ., Աналіз фінансово-економіческої діяльності підприємства. Учеб. пособие для вузов. М., 2002, § 412:

¹⁶ Ը. Էվիմյան, նշվ. աշխ., էջ 425:

է թողնում վճարունակության վրա, սակայն արդյունավետության աստիճանի և տնտեսական նպատակահարմարության օբյեկտիվ գնահատման առավել պատկերավոր ցուցանիշը շահութաբերության մակարդակն է¹⁷: Ի տարբերություն շահույթի՝ շահութաբերության ցուցանիշները ձեռնարկության տնտեսական գործունեության արդյունավետության և ֆինանսական արդյունքների բնութագրման հարաբերական ցուցանիշներ են համարվում:

Շահութաբերությունը ձեռնարկության գործունեության արդյունավետությունը գնահատելու ընդհանրական ցուցանիշն է, որը բնութագրում է կատարած ծախսերի հատուցը և տնտեսական ռեսուրսների օգտագործման մակարդակը: Տարբերում են «Ճյուղի շահութաբերություն» և «ձեռնարկության շահութաբերություն» հասկացությունները¹⁸: Եթե ձեռնարկության շահութաբերությունն արտահայտվում է որոշակի ձեռնարկության ստացած ընդհանուր հասույթի և ծախսերի հարաբերությամբ, ապա Ճյուղի շահութաբերությունը նկարագրվում է տվյալ ճյուղի բոլոր ձեռնարկությունների մակարդակով, ընդ որում՝ ճյուղը կարող է համարվել շահութաբեր, եթե նույնիսկ ճյուղի 1 կամ 2 ձեռնարկություն աշխատել է վնասով՝ պայմանով, որ մյուսների շահույթը կծածկի վերջիններիս վնասը:

Պլանային տնտեսության պայմաններում արտադրության շահութաբերության գործակիցը որոշվում էր որպես ստացված շահույթի գումարի և արտադրությունում օգտագործվող հիմնական ֆոնդերի ու նորմավորվող սեփական շրջանառու միջոցների միջին տարեկան արժեքի հարաբերություն՝ արտահայտված տոկոսներով: Դա ցույց է տալիս, որ շահութաբերության մակարդակը կախված է ոչ միայն շահույթից, այլ նաև ֆոնդատարությունից¹⁹: Սակայն ձեռնարկություններն արտադրական գործընթացի կազմակերպման համար կատարում են նաև աշխատավարձի վճարման հետ կապված ծախսեր, ուստի շահութաբերության իրական մակարդակը գնահատելիս կարևորվում է մարդկային կապիտալի վրա կատարված ծախսումների որոշումը:

Շահութաբերությունը ցույց է տալիս համապատասխան շահույթի մեծության հարաբերությունն արտադրական ծախսերին, կոմերցիոն գործընթացների կազմակերպման մեջ ներդրված դրամական միջոցների կամ ձեռնարկության՝ իր գործունեությունը կազմակերպելու համար օգտագործվող սեփական միջոցների մեծությանը: Ներկայումս կազմակերպություններում ֆինանսական առավել համապարփակ վերլուծության համար հաշվարկվում են իրացման, կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշները:

Իրացման շահութաբերությունը ցույց է տալիս յուրաքանչյուր աշխատած դրամի մեջ շահույթի տեսակարար կշիռը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԾԲ}_{\%} = \frac{\text{գուտ շահույթ}}{\text{իրացումից հասույթ}} \times 100\% \quad (4)$$

Գործնականում հաշվարկվում են նաև իրացման շահութաբերության հետևյալ ցուցանիշները՝

¹⁷Տե՛ս Գօրֆինկել Վ.Յ., Էկономика предпринятия, 2004, էջ 245:

¹⁸Տե՛ս Պոպովа Р.Г., Սամոնովա И.И., Финансы предприятий. Питер, 2004, էջ 452:

¹⁹Տե՛ս Բօբրովիչ С.М., Բօգատիրյօվա Օ.В., Оценка финансового состояния и деловой активности предприятия. Учебное пособие. Краснодар, 2001, էջ 120:

$$\zeta_{\text{ամախառն}} \text{շահույթի} \text{մարժա} = \frac{\text{համախառն} \text{շահույթ}}{\text{իրացումից} \text{հասույթ}} \quad (5)$$

$$\text{Գործառնական} \text{շահույթի} \text{մարժա} = \frac{\text{գործառնական} \text{շահույթ}}{\text{իրացումից} \text{հասույթ}} \quad (6)$$

$$\text{Մարժա} \text{մինչև} \text{հարկումը} = \frac{\text{շահույթ} \text{նախքան} \text{հարկումը}}{\text{իրացումից} \text{հասույթ}} \quad (7)$$

Արագ աճող գործառնական մարժան կարող է ցույց տալ գործառնական ծախսերի վերահսկողության բարելավում, ինչպիսիք են, օրինակ՝ վարչական ծախսերը, իսկ նվազող գործառնական շահույթի մարժան կարող է լինել գործառնական ծախսերի վերահսկողության վատթարացման ցուցանիշ:

Իրացման շահութաբերության ցուցանիշերը ցույց են տալիս, թե ձեռնարկությունը միավոր դրամի իրացումից քանի տոկոս շահույթ է ստանում: Դա հիմք է ծառայում արտադրանքի թողարկման անվանացանկի ընտրության համար²⁰:

Ակտիվների շահութաբերությունը ցույց է տալիս բոլոր ակտիվների բերած շահույթը՝ անկախ դրանց տեսակից կամ էլ ստացման աղբյուրներից: Ակտիվների շահութաբերությունը, ընդհանուր առմանք, արտացոլում է նյութական, աշխատանքային, ֆինանսական միջոցների, ինչպես նաև բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը՝ դարնալով գործարարության արդյունավետության գնահատման հիմնական միջոց: Ձեռնարկության ակտիվների օգտագործման արդյունավետությունը գնահատելու համար նախընտրելի են ստորև բերված նորմաները.²¹

$$\text{ակտիվների} \text{շահութաբ.} \text{նորմա} = \frac{\text{գուտ} \text{շահույթ}}{\text{ակտիվների} \text{գումար}} \times 100,$$

$$\text{ընթացիկ} \text{ակտիվների} \text{շահութաբ.} \text{նորմա} = \frac{\text{գուտ} \text{շահույթ}}{\text{ընթացիկ} \text{ակտիվների} \text{գումար}} \times 100,$$

$$\text{հաշվեկշռային} \text{շահութաբ.} \text{նորմա} = \frac{\text{հաշվեկշռային} \text{շահույթ}}{\text{գուտ} \text{հասույթ}} \times 100,$$

$$\text{գուտ} \text{շահութաբ.} \text{նորմա} = \frac{\text{գուտ} \text{շահույթ}}{\text{գուտ} \text{հասույթ}} \times 100,$$

$$\text{գուտ} \text{ակտիվների} \text{շահութաբեր.} \text{նորմա} = \frac{\text{շահույթ}}{\text{գուտ} \text{ակտիվներ}} \times 100: \quad (8)$$

Բերված ցուցանիշները բնութագրում են ակտիվների մեկ դրամին բաժին ընկնող հասույցը կամ ձեռնարկություններում ներդրված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Սեփական կապիտալի շահութաբերությունը հաշվարկվում է որպես ձեռնարկության ստացած շահույթի և սեփական կապիտալի հարաբերություն՝

$$\zeta_{\text{ԲԱկ}} = \frac{\text{գուտ} \text{շահույթ}}{\text{սեփական} \text{կապիտալ}} \times 100\% \quad (9)$$

²⁰ Տե՛ս Ըկլյանենկո Վ.Կ., Էկономика պредприятия, Մ., 2005, էջ 401:

²¹ Լ. Բաղանյան, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Եր., 2007, էջ 265:

Սեփական կապիտալի շահութաբերությունից բացի, կարևոր նշանակություն ունի նաև ընդհանուր կապիտալի շահութաբերությունը: Դա որոշվում է հետևյալ բանաձևով:

$$\text{ԾԲ}_{\text{ընդ}} = \frac{\text{գուտ շահույթ}}{\text{սեփական կապիտալ} + \text{ֆոխառու կապիտալ}} \times 100\% \quad (10)$$

Ընդհանուր կապիտալի շահութաբերության գնահատման համար կարելի է օգտագործել նաև նախքան հարկումը շահույթի մեծությունը և տոկոսների մարումը: Վերջինիս միջոցով որոշվում է շահույթը, որը ստացվում է ընկերության կողմից օգտագործվող ընդհանուր կապիտալի միջոցով (Կարձաժամկետ պարտավորություն, երկարաժամկետ պարտավորություն և սեփական կապիտալ):

Ֆինանսական առավել խոր վերլուծության համար երբեմն անհրաժեշտություն է առաջանալ նաև գնահատելու արտադրանքի շահութաբերության և դրամական միջոցների շահութաբերության մակարդակները²²: Արտադրանքի շահութաբերության ցուցանիշներն են՝

$$\text{ԾԲ}_{\text{միավոր արտադրանք}} = \frac{\text{միավոր արտադրանքի հաշվով շահույթ}}{\text{միավոր արտադրանքի ինքնարժեք}} \times 100\% \quad (11)$$

$$\text{ԾԲ}_{\text{արտադրանք}} = \frac{\text{առևտորային թողարկման հաշվով շահույթ}}{\text{արտադրանքի լրիվ ինքնարժեք}} \times 100\% \quad (12)$$

$$\text{ԾԲ}_{\text{արտադրություն}} = \frac{\text{գուտ շահույթ}}{\text{իհմն. արտադր. ֆոնդեր + նորմավորվող շրջանառու միջոցներ}} \times 100\% \quad (13)$$

Վերը նշված ցուցանիշները բնութագրում են տարբեր արտադրատեսակների, ողջ առևտորային արտադրանքի շահութաբերությունը և ձեռնարկության եկամտաբերությունը: Դրանք գնի հաստատման հիմքն են կազմում²³:

Դրամական միջոցների շահութաբերության ցուցանիշները թույլ են տալիս պատճերացում կազմել այն մասին, թե արդյոք ընկերությունը կարող է կատարել պարտավորություններն իր դրամական միջոցների և արտադրական ներուժի օգտագործման միջոցով:

Այսպիսով՝ տնտեսագիտական գործառնության մեջ տարբեր հեղինակներ տարբեր կերպ են դասակարգում շահութաբերության ցուցանիշները: Գործնականում շահութաբերությունը գնահատելու նպատակով, ձեռնարկության գործունեության որոշակի իրավիճակից կախված, օգտագործվում են մինչև հարկումը, սովորական գործունեությունից ստացված կամ գուտ շահույթը: Որպես հարաբերակցության համարիչ հաճախ օգտագործվում են համախառն և գուտ շահույթի ցուցանիշները, իսկ որպես հայտարար, համապատասխանաբար՝ ակտիվների հաշվեկշռային արժեքը, գործող ակտիվները:

²²Տե՛ս Յայցեվ Հ.Լ., Էկономика промышленного предприятия, М., 2002, էջ 257:

²³Տե՛ս Գրաֆով Ա.Վ., Оценка финансово-экономического состояния предприятия, "Финансы" 2001, էջ 63:

ГАЯНЕ ГРИГОРЯН

Доцент кафедры „Микроэкономики и организации предпринимательской деятельности“ АГЭУ, кандидат экономических наук

ЗЕНФИРА ТУМАСЯН

Доцент кафедры „Микроэкономики и организации предпринимательской деятельности“ АГЭУ, кандидат экономических наук

ЗАРУИ МЕЛКУМЯН

Аспирант кафедры „Микроэкономики и организации предпринимательской деятельности“ АГЭУ

Теоретико-методологические основы планирования прибыли и прибыльности предприятия.— Основная задача статьи изучить особенности прибыли и планирования прибыльности.

Со стороны авторов выдвинуты следующие основные задачи: изучить значение экономического содержания “прибыли” и “прибыльности”, исследовать особенности структуры и состава, также факторы и методологию планирования. Все объяснения авторов о понятии “прибыли” можно укомплектовать по очередности.

Ключевые слова: предпринимательская деятельность, эффективность предприятия, прибыль, прибыльность, минимальные затраты, максимальная выгода, собственный капитал.

JEL: D24, D39, L23, L26, M29

GAYANE GRIGORYAN

Associate Professor at the Chair of
“Microeconomics and Entrepreneurial Management”
at ASUE, PhD in Economics

ZENFIRA TUMASYAN

Associate Professor at the Chair of
“Microeconomics and Entrepreneurial Management”
at ASUE, PhD in Economics

ZARUHI MELKUMYAN

PhD Student at the Chair of “Microeconomics and
Entrepreneurial Management” at ASUE

The Theoretical–Methodological Basics of Company's Profit and Profitability Planning.— The main purpose of the article is the study of planning characteristics of profit and profitability.

The authors have emphasized the following basic problems: to study the economic content of “profit” and “profitability”, to examine peculiarities of their structure as well as the company's profit and profitability factors and planning methodology.

Key words: entrepreneurial activity, minimum expenses, profit, profitability, maximum benefit, production efficiency, own capital.

JEL: D24, D39, L23, L26, M29